

ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ

(Տ-Ք)

Տ.

Ձեռքի տեղ ձեռքն էր տարածած,
 Ոտքերու տեղ ոտքն ուղղադնաց,
 Դառն փայտին տեղ փայտ մ'անգին...
 Տեղի տրաւ մա՛նր կեանքին,
 Խաչուած հետ զոյգ, մ'անօրինի
 Օրէնդսդիրն մե՛րկ հոլանի՝
 Մինչ կոյրերը աչք կը փակեն՝
 Կը ճանչցըւի աւտղակէն:

Ր.

Ինքն արեւու ժամերուն երբ
 Տիւն մըթայուց զիշերակերպ՝
 Ըստուերն ձրգեց քօղ մեկնութեան
 Որ չըտեսնէ աչքն անարժան.
 Նըսեմացաւ կէսօրն անգամ
 Երբ մեղքերով մեռաւ Ադամ,
 Իսկ լոյսն իննին ծագեց անամպ
 Երբ լուծուեցաւ մահն Իր մահուամբ:

Յ.

Յաւի արյունք կը ցօղէր տաք
 Հէք Տիրամայրը խաչին տակ,
 Երբ Միածին Որդին իր դէմ
 Կ'աղաղակէ՝ « Ծարաւի եմ »,
 Քացախ տըւին Անոր՝ որ մին
 Դետ բըղխեցուց մէջ Նդեմին,
 Ու Քարէն ջուր խըմցուց առատ
 Ցասկոտ ցեղին այն ապիրատ:

Ի.

Նրեքն էր ժամն երբ Օձն կըծեց
 Միտքն Եւային՝ մեր Մօրը մեծ,
 Վեցն էր՝ ինկաւ մարդը նախկին
 Հաւանելով անոր խօսքին...
 Ա՛յդ ժամուն՝ Տէ՛րն վըրայ խաչին
 Քաւեց անոնց մեղքն առաջին,
 Ու Ադամի ելած պահուն՝
 Մտաւ աւազա՛կը Դրախտն անհուն:

Փ.

Ինծի համար՝ Նա փաբելի
 Ձայնով գոչեց « էլի էլի »,
 Ու Հօրն յանձնած հոգւովն հանդերձ
 Մեր հոգիներն ալ ընծայեց...
 Սասանեցաւ երկիրն անլաւ,
 Հին վարագո՛յրը ճեղքուեցաւ,
 Հերձան քարերը ցիրուցան,
 Գերեզմանները բացուեցան...

Ք.

Հրաշքներ որ վկայ են թէ Աստուած
 Ինծի համար մարմնով խաչուած՝
 Մեր իսկ բնութեամբ կը մեռնի,
 Թէպէտ Աստուած մ'է կենդանի.
 Զոյգ ակերէն կողի խոցին
 Կը հաստատուի Եկեղեցին՝
 Որ Զրով սրբուած է՝ Արիւնով նոր՝
 Կը փառաւորէ՝ Որդին հետ Հօր:

ԵՂՈՇԷՆ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ (Տ-Ք)

Խոստովանեալն եղերո՞ւք տեանքն զի բան
 ընդ է՛, զի յաւիտեանն է՛ ողորմու
 թիւն նորա՛:

Տաճարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք
 ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ
 փայտի դանքն պըտղոյ կեանք ընդ
 մահու փոխարկելով. ի՛ մէջ երկունց
 անօրինաց կայր մերկացեալ տուողն
 օրինաց. զոր ոչ տեսին անգգն կու
 րաց բայց ի՛ միոյն յաւանգակաց:

Բոպէից արեգակսն ըզտիւն արար
 գիշերանման. զըստուերն քօղ արկ
 մերկութեան զի մի՛ տեսցէ անն ա
 նաթան. ի՛ միջօրեայն նըսեմացաւ յոր
 ժամ անամ մեղօք մեռաւ. ի՛ յիննե
 լորդն ի լոյս դարձաւ յորժամ մահ
 ուամբ մահն լուծաւ:

Յօղէր արտօնըր ցանգին մայր տեսն
 որ կայր մերձ առ խաչին. յորժամ
 լըսէր ըզճարալին բարբառելոյ ի՛ւր
 միածնին. ետուն քացաի խառնեալ
 լեզի այնմ որ բըղխեաց գետ յագենի.
 եւ ի վիմէն վըտակ բարի անբոյց տոհ
 մին գաննացողի:

Խլածեալ յերրորդ ժամու օձին զմիւ
տըս նախնւոյ մօրն եւայս. ի վեցն
անկեալ մարդն անաջին հաւանական
բանիւ նորին. ի սոյն ժամու տէրն ի
խաչին զի քաւեցէ՛ զմեղըս նոցին. եւ
յորժամ ել անամբն հին եդ զանա-
զակն ի մէջ դրախտի՛ն :

Փափելի՛ բարբառ ընդ իմ էլի էլի՛ առ
հայր գոչէր. զհոգին կամաւ հօր ան-
ւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծա-
յէր. երկիր հիմամբք սասանեցաւ և
վարապոյն ընդ մէջ հերձաւ. վիճք ի
յինքեանց պատանուեցան եւ գերեզ-
մանք մահո՛ւ բացա՛ն :

Քարոզի՛ ի սքանչելեացս աստուած
մարմնով վասն իմ խաչեալ. մերով
բնութեամբն մեռանի աստուած ան-
մահ իստոյականի. կըրկնավրտակ կո՛-
ղին անլերբք եկեղեցի՛ իւր հաստա-
տի. ջրովն մաքրի զանրիւնն ըմպէ՛ զոր-
դի՛ ընդ հօր փառանորէ՛ :

Օրթի: Աւետարան Յովհ. 6Ժէ: ԺԲ.2:

Գիտէր եւ յուդա: Վերջ 27. հաւ իստեցաւ:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ